ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ և 13-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 4-րդ փողոցը՝ նրբանցքով (սկսվում է Սիլիկյան 5-րդ փողոցից, հասնում՝ Սիլիկյան հին խճուղի), անվանակոչել հայ հոգևոր երգիչ, մանկավարժ Խորեն Պալյանի անվամբ՝ «Խորեն Պալյան փողոց», «Խորեն Պալյան փողոց, 1-ին նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորեն Պալյանը ծնվել է 1935 թվականի մարտի 10-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում: 1946թ. տեղափոխվել է Հայաստան: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում: 1955թ. Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ և 1961թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին Վեհափառի ձեռամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 1962թ. Օշականում պաշտպանել է վարդապետական ավարտաճառ և ստացել վարդապետական չորս աստիճաններ: Սբ. Էջմիածնում զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ: 1965թ. թողել է հոգևոր ասպարեզը և ամուսնացել հոգևոր երգերի կատարող Լուսինե Զաքարյանի հետ: 1965-68թթ սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ապա հայոց լեզվի պատմության ամբիոնում նշանակվել է դասախոս՝ դասավանդելով լեզվի պատմություն և գրաբար, իսկ 1995-2005թթ՝ աստվածաբանության ֆակուլտետում՝ ծիսագիտություն, վարքաբանություն: 15 տարի շարունակ ղեկավարել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի «Հայ տոհմիկ» երգչախումբը: 1978-2004թթ ժամակարգություն, տեսական շարականագիտություն և հայ հոգևոր երաժշտություն է դասավանդել Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, ապա՝ Սևանի Վազգենյան դպրանոցում: Հեղինակել է երաժշտագիտական, բանասիրական, եկեղեցագիտական բազմաթիվ հոդվածներ: Եղել է մանկական քրիստոնեական հանրագիտարանի և «Դասական գրաբարի հատընտիր» գրքի համահեղինակը: Տարբեր տարիներին վարել է «Զրույցներ գրաբարի մասին», «Խորհուրդ խորին» և այլ հեռուստատեսային հաղորդաշարեր: 1996-2005թթ վարել է «Արևագալ» երաժշտական-հոգևոր հաղորդաշարը: 1989թ-ից ամենամյա համերգ-դասախոսություններով, համերգներով հանդես է եկել Լոս-Անջելեսում, Հելսինկիում: 2005թ. լույս է տեսել հեղինակային «Ժամակարգություն Հայաստանեայց Եկեղեցւոյ» ուսումնական ձեռնարկը: 2006թ. ընտրվել է Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի հայկական մասնաճյուղի անդամ: Արժանացել է Ամենայն Հայոց կաթողիկոսի «Սբ. Ներսես Շնորհալի» շքանշանին: Մահացել է Երևանում, թաղված է Էջմիածնի Սբ. Գայանե եկեղեցու բակի գերեզմանատանը: Այս տարի լրանում է Խորեն Պալյանի 90-ամյակը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 4-րդ փողոցը՝ նրբանցքով (սկսվում է Սիլիկյան 5-րդ փողոցից, հասնում՝ Սիլիկյան հին խճուղի), անվանակոչել հայ հոգևոր երգիչ, մանկավարժ Խորեն Պալյանի անվամբ՝ «Խորեն Պալյան փողոց», «Խորեն Պալյան փողոց, 1-ին նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ և 13-րդ կետերով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**